ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 ssarchapet@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 168

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ-ի կողմից ի դեմս պետական եկամուտների կոմիտեի լիազորված անձ Արթուր Եղիազարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզ Սարչապետ համայնք գ. Գոգավանում գտնվող հետևյալ ծածկագրերով՝ 06-067-0202-0035, 06-067-0202-0036, 06-067-0202-0037, 06-067-0202-0038, 06-067-0202-0039, 06-067-0202-0040, 06-067-0202-0044, 06-067-0202-0051, 06-067-0202-0052, 06-067-0202-0053, 06-067-0425-0001, 06-067-0425-0002, 06-067-0404-0002, 06-067-0405-0001, 06-067-0101-0001, 06-067-0101-0002, 06-067-0101-0006, 06-067-0101-0008, 06-067-0422-0011,06-067-0402-0002, 06-067-0102-0001, 06-067-0102-0002, 06-067-0102-0003 անշարժ գույքերը միավորել և տրամադրել փոստային հասցե՝ՀՀ Լոռու մարզ Սարչապետ համայնք, գյուղ Ձորամուտ, գ. Գոգավան, փ. 1, թիվ 25:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

20 22թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 ssarchapet@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 169

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԻՑ ԱՃՅՈՒՆԻ ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 17-րդ մասով, ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 23-ի <<<<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին>> թիվ 1910 որոշման 8-րդ հավելվածով, հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի բնակչուհի Մարիետա Կոստանդյանի 29.08.2022թ. դիմումը, ՀՀ Կոտայքի մարզի <<Աբովյան քաղաքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի 25.08.2022թ. Աբովյան համայնքի քաղաքային գերեզմանատանը վերահուղարկավորելու վերաբերյալ համաձայնությունը՝ թիվ 373 և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի 31.08.2022թ. թիվ 15377-2022 գրությամբ եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Մարիետա Կոստանդյանին թույլ տալ ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Արծնի բնակավայրի գերեզմանատնից տեղափոխել ամուսնու՝ Վլադիմիր Կոստանդյանի՝ մահացած 1991թ., աճյունը Աբովյան համայնքի քաղաքային գերեզմանատանը վերահուղարկավորելու համար՝ ըստ օրենքով սահմանված կարգի:
2. Արծնիի վարչական ղեկավար Խ. Էգնատոսյանին՝ հետևողական լինել, որպեսզի աճյունը գերեզմանից հանելու ընթացքը համապատասխանի ՀՀ կառավարության <<<<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները եվ գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին>> թիվ 1910 որոշման 8-րդ հավելվածով սահմանված կարգի պահանջներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

20 22 թ. օգոստոս 31
գ.Սարչապետ